Արձանագրություն N 2
«ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-24/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման **և գնահատման նիստի**

ք. Երևան 26 հունվար 2024թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Վարդապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Փինաջյան
Ս.Զոբանյան

Քարտուղար՝ Ա.Ղարիբջանյան

1. «ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-24/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2024թ. հունվարի 26-ին, ժամը 12:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2024թ. հունվարի 29-ին, ժամը 12:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուց հետո՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

«ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-24/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 30 հունվար 2024թ.
Ժամը՝ 16:00

6. «ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-24/29» ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2024թ. հունվարի 29-ին, ժամը 12:00:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	«Ալեքսիմ» ՍՊԸ	ք . Վանաձոր, Աղայան 72/37, հեռ. +374 95 32-73-57
2	«ՄԵԳԱ ԼԼԼ» ՍՊԸ	Արարատ Դարբնիկ հեռ. +374 98991396

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Հերթական համար	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առավելագույն սահմանային գին	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)*			
					«Ալեքսիմ» ՍՊԸ		«ՄԵԳԱ ԼԼ» ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալԱԱՀ
1	շենքերի մաքրման ծառայություններ	դրամ	1	14165000	14 150 730	-	24 000 000	28 800 000

- **Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն «առանց ԱԱՀ» սյունակը**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Ալեքսիմ» ՍՊԸ-ն:

10. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն, Ալեքսիմ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հայտում սխալ է նշված իրական շահառուների մասին տեղեկատվության հողումը: **Նշվածով պայմանավորված հանձնաժողովը որոշեց առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել օրենսդրությամբ սահմանված կագով մեկ աշխատանքային օրում շտկել նշված անհամապատասխանությունը**:

«ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-24/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

28 փետրվար 2024թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Աղազարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Փինաջյան
Ս.Զոբանյան

Քարտուղար՝ Դ. Միերյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 27.02.2024թ. թիվ 598-Ա հրամանով հանձնաժողովի կազմում կատարվել է փոփոխություն, համաձայն որի հանձնաժողովի նախագահը փոխարինվել է՝ Հ.Աղազարյանով, իսկ քարտուղարը՝ Դ.Միերյանով:

Հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը:

Միևնույն ժամանակ արձանագրվեց, որ ՀՀ արդարադատության նախարարության 27.02.2024թ. թիվ /26.2/7860-2024 գրության և 20.02.2024թ. թիվ Ն/929-2024 զեկուցագրի համաձայն՝ «Ալեքսիմ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Մարկոսյանը, փոխկապակցված անձ է հանդիսանում «Մաքսալեքս» ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Մուրադյանի հետ /վերջիններս հանդիսանում են ամուսիններ/, իսկ «Մաքսալեքս» ՍՊԸ-ն 01.07.2023թ-ից մինչև 01.07.2025թ. ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Նշվածով պայմանավորված հանձնաժողովը որոշեց՝ «Ալեքսիմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ գնման ընթացակարգը Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած (ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետ 2-րդ ենթակետ):

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Աղազարյան

Անդամներ՝ Ա.Փինաջյան

Ս.Չորանյան

Քարտուղար՝
Դ.Միերյան